Դանիել Վարուժան

Գարնան անձրև

Դաշտերուն վրա իր տրտմությամբ համառող
Անձրևը չէ՛ ասիկա:
Գարնան ջաղբն է՝ որ ցանքերուն վրա անհուն
Լուսացընցուղ կտեղա:

Աստղերն անհայտ, կարծես հալած արևեն,
Տեղատարափ կթափին,
Եվ կլվան իրենց լույսին մեջ փաղփուն
Անդաստաններն ու այգին:

Կապույտն հանկարծ կու լա բուռն ծիծաղեն,
Եվ կտեղա ադամանդ.
Կը լուսանան կույր աղբերակներն ու կ'երգեն
Իրենց ծընունդն արգավանդ:

Անհունն ի վար կհեղեղվին շառաչուկ
Մեծ կաթիլներ շափյուղա,
Լի արևով, ցընծությունով, կապույտով,
Ծիծաղներով սատափյա:

Մարգերը թաց կ'արտաշընչեն զովություն…
Կը լրվացվին գառնուկներ…
Բո՛ւյրը հողին, հողին բո՛ւյրը, ծավալուն,

Կը լեցնե գյուղն ու եթեր:

Ու արտերո՛ւս, արտերո՛ւս մեջ քրտնաշատ
Իմ ցորյաններս համեցող
Նոր ուժերով հորդահոսա՛ն կրձյուղին
Կայլակներու մեջ ի լող:

Եվ մաքըրված անտառին մեջ, այս պահուս,
– Ըստ իմ գյուղիս հեքիաթին –
Կծնի եղնիկը, գոտիին տակ ծիրանի,
Եզնորդ մը՝ նման լուսինին: